

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ
ՀԱՐԿԱՅԻՆ ԵՎ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ N 42/5

ք.Երևան

16 հուլիսի 2018թ.

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), քննության առնելով ՀՀ ՊԵԿ փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության 04.06.2018թ. N4102016 ակտի դեմ Ա/Ձ Ժենյա Չլինգարյանի դիմում-բողոքը՝

ՊԱՐԶԵՑ

1. Բողոքարկման առարկան, դիմում-բողոքով բերված փաստարկները և ներկայացված պահանջները

Ա/Ձ Ժենյա Չլինգարյանը հայտնում է, որ 2018թ. ապրիլի 21-ին ՀՀ ԿԱ ՊԵԿ ՓՀՎ ՀՏՎ ստուգումների թիվ 4 բաժնի հարկային տեսուչը, որը չի ներկայացել, հայտարարել է, որ նրա կողմից վարձակալած Կոմիտաս 55/63 հասցեում գտնվող խանութից, որտեղ ապրանքների վաճառքն իրականացնում է անձամբ, կատարվել է առևտուր և չի տրամադրվել ՀԴՄ կտրոն: Քանի որ տեսուչին առաջին անգամ էր տեսնում հարցրել է, թե երբ է առևտուր կատարել: Տեսուչը պատասխանել է, որ առևտուրը կատարել է իր գործընկերը և կարիքը լինելու դեպքում, նա կարող է մոտենալ: Տեսուչը, առանց իր համաձայնությունը ստանալու, մոտեցել է ՀԴՄ-ին և «Z» հաշվետվություն հանել, գումարը մուտքագրել, որից հետո նորից հաշվետվություն է հանել: Քանի որ, Ա/Ձ Ժենյա Չլինգարյանը «Հ.Վ.Բաղդասարյան» ՍՊԸ հետ կնքել է ծառայությունների մատուցման պայմանագիր, որով վերջինս ստանձնել է պարտավորություն հարկային ստուգումների ժամանակ հանդես գալ որպես լիազոր անձ և պաշտպանել իր շահերը, զանգահարել է լիազոր անձ Լիլիթ Մակիջյանին, իրողության մասին պատմել, իր հետագա գործողությունների մասին տեղեկանալու, և նրա ներկայությունն ապահովելու համար: Այդ ընթացքում խանութի տարածք է մտել ևս մեկ տեսուչ, որին Ա/Ձ Ժենյա Չլինգարյանն առաջին անգամ էր տեսնում: Վերջինս հայտնել է, որ գնումն ինքը չի կատարել: Երբ Ա/Ձ Ժենյա Չլինգարյանի ցանկություն է հայտնել տեսնել գնորդին, տեսուչները պատասխանել են, որ գնորդը շուտով կմոտենա: Հարկային տեսուչներից մեկը հեռախոսով խոսել է Լ.Մակիջյանի հետ: Քանի, որ Լ.Մակիջյանը խնդրել էր տեսուչներին տասը րոպե սպասել, մինչև նա կմոտենա, ուստի այդ ընթացքում Ա/Ձ Ժենյա Չլինգարյանը ստորագրել է ստուգման հանձնարարագիրը և նորից պահանջել տեսնել գնում կատարած տեսուչին: Տեսուչները դուրս են եկել և որոշ ժամանակ անց եկել երեքով և ներկայացրել իրենց մյուս գործընկերոջը, պնդելով, որ նա գնում է կատարել: Ա/Ձ Ժենյա Չլինգարյանը պնդել է, որ նրան չի հիշում և ընդհանրապես նրան չի տեսել: Նրանք պատճառաբանել են, թե 40 րոպե առաջ են գնում կատարել, և նա մեծ կին է, հիշողությունը լավ չի, դրա համար չի հիշում: Խոստացված տասը րոպեից ներկայացել են լիազորված անձինք «Հ.Վ. Բաղդասարյան» ՍՊԸ տնօրեն Լ.Բաղդասարյանը և գլխավոր հաշվապահ Լ.Մակիջյանը և տեսուչներից պահանջել են վկայականները, ինչպես նաև շաբաթ՝ ոչ աշխատանքային օրն աշխատելու մասին հրամանը: Վկայականները ցույց են տրվել, իսկ հրամանը՝ ոչ: Լ.Մակիջյանը պահանջել է ցույց տալ այն ապրանքը, որն իբրև գնվել էր Ա/Ձ Ժենյա

Չլինգարյանից: Տեսուչներից մեկը դուրս է եկել և որոշ ժամանակ հետո ներս մտել մեկ տուփ ծխախոտը և մեկ տուփ մաստակը ձեռքին:

Ա/Ձ Ժենյա Չլինգարյանը կարծում է, որ խախտվել են հարկային օրենսգրքի 339-րդ հոդվածի 4-րդ կետի 1-ին ենթակետի պահանջները, այն է՝ հսկիչ դրամարկղային մեքենայի կիրառման ճշտության ստուգումների դեպքում, հանձնարարագրի երկու օրինակն առձեռն ծանոթացման են ներկայացվում ստուգման ընթացքում մինչև ստուգման հանձնարարագրում նշված ստուգման ժամկետի վերջին օրը ներառյալ, բայց ոչ ուշ, քան խախտում հայտնաբերելուց անմիջապես հետո: Եվ քանի, որ լիազոր անձի կողմից այդ հարցը բարձրացվել է տեսուչների մոտ, տեսուչների կողմից նորից հնչեց պատճառաբանություն, թե գուցե հիշողության խնդիր է ունեցել և 04.06.2018թ. թիվ 4102016 ակտում խեղաթյուրելով իսկությունը ներկայացվել է, որ 21.04.2018թ. ժամը 14:50-ին կատարվել է գնում և այնուհետև 14:54-ին ՀԴՄ-ից դուրս է բերվել «Z» հաշվետվություն:

Ա/Ձ Ժենյա Չլինգարյանը նշում է, որ չունի հիշողության կորստի խնդիր և հստակ հիշում է, որ 21.04.2018թ. ժամը 14:50-ին հանձնարարագրով հսկիչ դրամարկղային մեքենայի ճշտության ստուգման մեջ ընգրկված տեսուչներից որևէ մեկը գնում չի կատարել:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ Ա/Ձ Ժենյա Չլինգարյանը խնդրում է չեղյալ համարել 04.06.2018թ. թիվ 4102016 ստուգման ակտը և 13.06.2018թ. թիվ 0448-18 կասեցման որոշումը:

2. Դիմում-բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՀՀ ՊԵԿ Փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության պետի 12.04.2018թ. N4102016 հանձնարարագրի համաձայն Ա/Ձ Ժենյա Չլինգարյանի մոտ կատարվել է հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառման ճշտության ստուգում: Արդյունքում կազմվել է ՀՀ ՊԵԿ Փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության 04.06.2018թ. N4102016 ակտը (այսուհետ նաև՝ Ակտ), որով լրացուցիչ վճարման է առաջադրվել 300.000 դրամ:

Ակտի 1-ին կետով մասնավորապես արձանագրվել է, որ ՀՀ ՊԵԿ ՓՀՎ ՀՏՎ ստուգումների թիվ 4 բաժնի հարկային տեսուչ Արտաշես Գևորգյանի կողմից 21.04.2018թ. ժամը 14:50-ին ք.Երևան, Կոմիտաս 55/63 հասցեում գործող մթերային խանութից կատարվեց գնում 700 դրամի չափով՝ 1 տուփ ծխախոտ և 1 հատ մաստակ, որոնց դիմաց վճարված կանխիկ գումարը Ա/Ձ Ժենյա Չլինգարյանի կողմից չմուտքագրվեց ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չտրամադրվեց: Ստուգումն իրականացնող պաշտոնատար անձանց կողմից ներկայացվեցին ծառայողական վկայականները և ստուգման հանձնարարագիրը՝ ծանոթացման: Այնուհետ ժամը 14:54-ին ՀԴՄ-ից դուրս բերվեց «Z» հաշվետվություն՝ 4780 դրամ ընդհանուր գումարով, որում ներառված չէր կատարված վճարման արժեքը: «Z» հաշվետվությունը դուրս բերելուց հետո կատարված վճարման արժեքը՝ 700 դրամը, ժամը 14:54-ին մուտքագրվեց ՀԴՄ, դուրս բերվեց կտրոն և ժամը 14:54-ին նորից դուրս բերվեց «Z» հաշվետվությունը՝ 5480 դրամ ընդհանուր գումարով:

Ստուգմամբ պարզվեց, որ տնտեսավարող սուբյեկտի կողմից խախտվել են ՀՀ կառավարության 05.10.2017թ. թիվ 1318-Ն որոշման հավելված N3-ով սահմանված հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառության կանոնների 4-րդ և 9-րդ կետերի պահանջները, համաձայն նույն կարգի 24-րդ կետի գնված ապրանքի կամ ստացված ծառայության արժեքի կամ քանակի չմուտքագրումը հսկիչ դրամարկղային մեքենա դիտվում է հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառության կանոնների խախտում:

Արդյունքում կիրառվել է ՀՀ հարկային օրենսգրքի 416-րդ հոդվածի 4-րդ կետի 1-ին ենթակետով սահմանված տուգանքը՝ գումարով 300.000 դրամ:

3. Հիմնավորումներ, պատճառաբանություններ և եզրահանգումներ

ՀՀ հարկային օրենսգրքի 380-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի և նոտարների կողմից կանխիկ դրամով կամ պլաստիկ քարտերի միջոցով իրականացվող դրամական հաշվարկների դեպքում (ներառյալ՝ կանխավճարները, մասնակի վճարումները) հսկիչ դրամարկղային մեքենայի կիրառությունը պարտադիր է առևտրի օբյեկտների, առևտրի իրականացման վայրերում վաճառատեղերի միջոցով մանրածախ վաճառք իրականացնելիս, բնակչության համար աշխատանքներ կատարելիս կամ բնակչությանը ծառայություններ մատուցելիս:

Օրենսգրքի 381-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ հսկիչ դրամարկղային մեքենա կիրառող կազմակերպությունները, անհատ ձեռնարկատերերը և նոտարները կանխիկ դրամով կամ պլաստիկ քարտերի միջոցով դրամական հաշվարկներ իրականացնելիս պարտավոր են ապրանքներ ձեռքբերողին, աշխատանքներ ընդունողին կամ ծառայություններ ստացողին տրամադրել հսկիչ դրամարկղային մեքենայի կտրոն:

ՀՀ կառավարության 05.10.2017թ. թիվ 1318-Ն որոշման հավելված N3-ի 4-րդ կետի համաձայն՝ գանձապահը ՀԴՄ օգտագործող է, ով կանխիկ դրամով կամ պլաստիկ քարտի միջոցով իրականացված գործարքներին վերաբերող՝ սահմանված տեղեկությունները և հաշվարկի կատարման համար անհրաժեշտ տվյալները մուտքագրում է ՀԴՄ, տպում է ՀԴՄ կտրոնը և այն տրամադրում ապրանքներ ձեռք բերողին կամ աշխատանքներ ընդունողին կամ ծառայություններ ստացողին:

Հավելված N3-ի 9-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ գանձապահը պարտավոր է ապրանքները հանձնելու պահին՝ գնորդից կամ կատարված աշխատանքների կամ մատուցված ծառայությունների դիմաց՝ պատվիրատուից գումար ստանալու դեպքում, իսկ կանխավճարների կամ մասնակի վճարումների դեպքում՝ գումարը մուտքագրելուց անմիջապես հետո տրամադրել ՀԴՄ կտրոն:

Հավելված N3-ի 24-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ օրենսգրքով սահմանված պատասխանատվություն կիրառելու առումով՝ ՀԴՄ-ի կիրառության կանոնների խախտում է դիտվում ՀԴՄ-ի կտրոնի չտրամադրումը, այդ թվում՝ ստացված կանխավճարի դիմաց:

Նույն կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ ՀԴՄ-ի կիրառության կանոնների խախտում է դիտվում նաև գնված ապրանքի կամ ընդունված աշխատանքի կամ ստացված ծառայության արժեքի (այդ թվում՝ կանխավճարի) չմուտքագրումը կամ դրանց արժեքից ցածր արժեքի (այդ թվում՝ կանխավճարից ցածր կանխավճարի) մուտքագրումը:

ՀՀ հարկային օրենսգրքի 416-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ տվյալ գործունեության իրականացման վայրում (առևտրի օբյեկտում կամ ծառայության մատուցման վայրում) տեղադրված հսկիչ դրամարկղային մեքենաներով նախորդ եռամսյակի ընթացքում արձանագրված շրջանառության 0.7 տոկոսի չափով, բայց ոչ պակաս 300 հազար դրամից, բացառությամբ սույն մասի 2-րդ կետով սահմանված դեպքի, և կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ գործունեությունն այդ վայրում և այդ մասով կասեցվում է հինգ օրով:

Քննարկվող դեպքում, հարկային տեսուչ Արտաշես Գևորգյանի կողմից 21.04.2018թ. ժամը 14:50-ին ք.Երևան, Կոմիտաս 55/63 հասցեում գործող մթերային խանութից գնվել է 1 տուփ ծխախոտ և 1 հատ մաստակ, որոնց դիմաց կանխիկ վճարված 700 դրամը Ա/Ձ ժենյա Չլինգարյանի կողմից չի մուտքագրվել ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չի տրամադրվել:

Ստուգման ընթացքում կատարված գնման դիմաց Ա/Ձ Ժենյա Չլինգարյանի կողմից ՀԴՄ կտրոն չտրամադրվելու փաստը հիմնավորվել է ստուգման ընթացքում ձեռք բերված ապացույցներով: Մասնավորապես, գնումը կատարելուց հետո ժամը 14:54-ին ՀԴՄ-ից դուրս է բերվել «Z» հաշվետվություն, որում ներառված չի եղել կատարված վճարման արժեքը, ՀԴՄ է մուտքագրվել է 700 դրամը, դուրս բերվել կտրոն և նորից դուրս է բերվել «Z» հաշվետվությունը:

Դիմում-բողոքում բերված այն պնդումների վերաբերյալ, որ խախտվել են ՀՀ հարկային օրենսգրքի 339-րդ հոդվածի 4-րդ կետի 1-ին ենթակետի պահանջները, այն է՝ սահմանված կարգով չի ներկայացվել ստուգման հանձնարարագիրը, հարկ է նշել, որ նշված պնդումները հիմնավոր չեն, քանի որ խախտումն հայտնաբերելուց անմիջապես հետո Ա/Ձ Ժենյա Չլինգարյանին է ներկայացվել ստուգման հանձնարարագիրը, որի դարձերեսին վերջինիս կողմից կատարվել են համապատասխան գրառումներ՝ հանձնարարագրին ծանոթանալու, դրա մեկ օրինակը ստանալու և ստուգումը փաստացի սկսվելու վերաբերյալ:

Հարկ է նշել նաև, որ գործում առկա է ՀՀ ԿԱ ՊԵԿ նախագահի 13.04.2018թ. N2/1222-Ա հրամանը, որի համաձայն 21.04.2018թ. ՀՀ ՊԵԿ Փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության պետի 12.04.2018թ. N4102016 հանձնարարագրում ընդգրկված պաշտոնատար անձանց համար եղել է աշխատանքային օր:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը գտնում է, որ իրականացված ստուգմամբ հիմնավորվել է Ա/Ձ Ժենյա Չլինգարյանի կողմից Ակտում հիշատակված իրավանորմերի պահանջների խախտման հանգամանքը, որի համար կիրառվել է ՀՀ օրենսդրությամբ նախատեսված համապատասխան պատասխանատվության միջոցը:

4. Եզրափակիչ մաս

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 20-րդ բաժնով, «Մաքսային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածով, Հանձնաժողովը

ՈՐՈՇՈՒՄ Է՝

ՀՀ ՊԵԿ Փոքր հարկ վճարողների հարկային տեսչություն-վարչության 04.06.2018թ. N4102016 ակտի դեմ Ա/Ձ Ժենյա Չլինգարյանի դիմում-բողոքը մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ



Ռ.ՄԱՇԱԴՅԱՆ